

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖՈՒՏԲՈՒԼԻ ՖԵԴԵՐԱՑԻԱ
ՄԱՐԶԱԴԱՇՏԵՐՈՒՄ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ
ՊԱՀՊԱՆՄԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ**



ԵՐԵՎԱՆ 2019

Սույն փաստաթուղթը սահմանում է Հայաստանի Հանրապետության տարածքում տեղակայված բոլոր ֆուտբոլային մարզադաշտերում, այդ թվում Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիայի (այսուհետ՝ ՀՖՖ) համապատասխան մարմինների կողմից հավաստագրված մարզադաշտերում ՀՖՖ հովանու ներքո անցկացվող ֆուտբոլային հանդիպումների ժամանակ կիրառվող կանոնները, որոնք պարտադիր են ֆուտբոլային հանդիպումների կազմակերպիչների, մարզադաշտերի սեփականատերերի և/կամ մարզադաշտերի վարձակալողների, հանդիսատեսի և սույն Կանոններում նշված այլ անձանց համար:

Սույն Կանոններում օգտագործվում են հետևյալ սահմանումները, որոնք ունեն ստորև բերվող նշանակությունը.

Մարզադաշտ – ուսումնամարզական գործընթացի և տարբեր սպորտաձևերի շրջանակներում մարզական միջոցառումների անցկացման համար նախատեսված մարզական կառույցների համալիր՝ իրեն հարակից տարածքներով, ընդհուպ մինչև արտաքին սահմանագատիչները, որի հիմնական տարր է հանդիսանում ֆուտբոլային մրցումների անցկացման համար նախատեսված խաղադաշտը:

Հանդիսատես – Հանդիպումից առաջ, ընթացքում և հետո տոմսի, աբոնեմենտի կամ հրավերի հիման վրա Մարզադաշտի ներսում գտնվող, բայց մինևսյն ժամանակ տվյալ մրցման անցկացմանը, այդ թվում հասարակական կարգի կազմակերպմանն ու ապահովմանը չներգրավված ֆիզիկական անձինք: Սուտքը Մարզադաշտ ենթադրում է Հանդիսատեսի կողմից սույն Կանոնների ընդունում (ճանաչում), որոնք գործում են տվյալ անձանց նկատմամբ նրանց՝ մարզադաշտում գտնվելու ամբողջ ընթացքում:

ՀՖՖ – «Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» հասարակական կազմակերպություն:

Ակումբ/Թիմ – մարզական առումով ՖԻՖԱ-ի, ՈԻԵՖԱ-ի և ՀՖՖ-ի կանոնակարգերին և նորմերին ենթարկվող ֆուտբոլային մարզական ակումբ (թիմ), որը մասնակցում է կամ ցանկանում է մասնակցել ՀՖՖ հովանու ներքո անցկացվող ֆուտբոլային մրցաշարերին (դրա տարբեր տարատեսակներին):

Ֆուտբոլային հանդիպման կազմակերպիչ – ՀՖՖ կամ ակումբ, որը, համաձայն Մրցաշարի կանոնակարգի և հաստատված խաղացանկի, հանդիսանում է ֆուտբոլային հանդիպման կազմակերպման պատասխանատու (ընդունող կողմ):

Երկրպագուների միություն – երկրպագուների կազմակերպություն (երկրպագուների հետ տարվող աշխատանքներով զբաղվող բաժին, ֆան-ակումբ, հասարակական կազմակերպություն, հասարակական շարժում և այլն) կամ նմանատիպ կազմակերպությունների միություն, որոնք պաշտոնապես ճանաչվել են ՀՖՖ-ի կամ Ակումբի կողմից:

Մարզադաշտի սեփականատեր և/կամ վարձակալող– Քաղաքացիական օրենսդրության նորմերի ուժով Մարզադաշտի սեփականատեր և/կամ վարձակալող հանդիսացող սուբյեկտ, հանձին այն սուբյեկտի, ով համապատասխանաբար պատասխանատու է հանդիսատեսների, հանդիպման կազմակերպիչների և Միջոցառման անցկացման կարգ ու կանոնն ապահովող սուբյեկտների հետ փոխհարաբերությունների համար:

Մրցումներ – ՀՖՖ հովանու ներքո անցկացվող մրցաշարեր (Հայաստանի Բարձրագույն խմբի առաջնություն, 1-ին խմբի առաջնություն, Հայաստանի Գավաթի խաղարկություն), այդ թվում Հայաստանի ազգային և բոլոր տարիքային հավաքականների, ինչպես նաև կանանց և ֆուտզալի հավաքականների խաղեր:

Հանդիպում – Մրցումների շրջանակներում անցկացվող ֆուտբոլային հանդիպում

Վերահսկիչ-կարգադրող մարմիններ – հանդիպման կազմակերպչի անվտանգության ծառայություն, վերջինիս կազմի մեջ չներառված կարգադրիչներ, ինչպես նաև կամավորներ և

անվտանգության մասնավոր ընկերություններ (դրանց աշխատակիցներ), որոնց հանդիպման կազմակերպչի կողմից տրված են լիազորություններ Մարզադաշտում հանդիպումից առաջ, հետո և հանդիպման ընթացքում կարգ ու կանոնի ապահովման վերահսկողությունն ապահովելու նպատակով:

Կարգադրիչ – հանդիպման կազմակերպման աշխատող ֆիզիկական անձ, ով, համաձայն սույն Կանոնների, ոստիկանության հետ համատեղ կարգ ու կանոնի պահպանման վերահսկողություն է իրականացնում Մարզադաշտի ներսում հանդիպումից առաջ, հետո և հանդիպման ընթացքում:

Կամավոր – հանդիպման կազմակերպիչ կողմի երկրպագուների ներկայացուցիչ հանդիսացող ֆիզիկական անձ, ով անհատույց, ընդհանուր կանոնով աջակցում է ոստիկանությանը, կարգադրիչներին և այլ վերահսկիչ-կարգադրող մարմիններին, այդ թվում նաև մոնիթորինգի իրականացման և Մարզադաշտում երկրպագուների գործողությունների նկատմամբ վերահսկողություն իրականացնելու հարցում:

«Մինչև հանդիպում» ընկած ժամանակահատված – Հանդիպման օրը հանդիսատեսի մուտքի համար Մարզադաշտի բացման (կամ կախված այն հանգամանքից, թե որն ավելի շուտ կլինի-Մարզադաշտի տարածք հանդիպմանը մասնակից թիմի մուտք գործելը) և հանդիպման սկզբի միջև ընկած ժամանակահատված, որն ազդարարվում է մրցավարի սուլիչով:

«Հանդիպումից հետո» ընկած ժամանակահատված – մրցավարի եզրափակիչ սուլիչի և թիմի՝ մարզադաշտը լքելու միջև ընկած ժամանակահատված (կամ կախված այն հանգամանքից, թե որն ավելի ուշ կլինի -վերջին հանդիսականը կլքի Մարզադաշտի տարածքը):

«Հանդիպման ժամանակ»–հանդիպման սկզբի և ավարտի միջև ընկած ժամանակահատված (մատնանշվում են մրցավարի՝ խաղի սկիզբն ու ավարտը ազդարարող սուլիչներով):

1. Հանդիսատեսների իրավունքները

Մարզադաշտում գտնվող/Մարզադաշտ մուտք գործող ֆուտբոլային հանդիպումների հանդիսատեսներն իրավունք ունեն՝

1.1. Մուտք գործել Մարզադաշտի տարածք տոմսերի (դրանց անալոգային տարբերակների-ակումբային քարտի, աբոնեմենտի, հրավերների) կամ հաստատված հավատարմագրերի առկայության դեպքում, որոնք Մարզադաշտ մտնելու իրավունք են տալիս հանդիպումից առաջ և հանդիպման ընթացքում (հանդիսատեսների՝ Մարզադաշտ մուտք գործելու հստակ ժամը որոշվում է նախախաղային ժողովի ընթացքում հանդիպման կազմակերպչի, Մարզադաշտի սեփականատիրոջ և/կամ վարձակալողի, ինչպես նաև ոստիկանության համատեղ որոշման միջոցով):

Ընդ որում հանդիպման կազմակերպիչը բացառիկ դեպքերում իրավասու է սահմանափակել հանդիսատեսների մուտքը Մարզադաշտ հանդիպման մեկնարկից 45 րոպե առաջ: Հանդիսատեսներին պետք է նախապես տեղեկացնել Մարզադաշտ մուտք գործելու արգելքի մասին մուտքի տոմսերի և Մարզադաշտի յուրաքանչյուր մուտքի մոտ տեղակայված հատուկ ցուցանակների վրա տեղեկատվություն տեղադրելու միջոցով:

1.2. Օգտվել հանդիպման կազմակերպչի և Մարզադաշտի սեփականատիրոջ (վարձակալողի) կողմից տրամադրված ծառայություններից՝ համաձայն հաստատված կարգի:

1.3. Մարզադաշտ բերել և օգտագործել թիմին աջակցելու միջոցներ, որոնք համապատասխանում են սույն Կանոնների պահանջներին:

1.4. Կանգնած աջակցել հանդիպմանը մասնակից թիմերին (առանց նստատեղերի վրա բարձրանալու), եթե այս առումով այլ հանդիսատեսների կողմից առարկություններ չկան:

1.5. Իրականացնել տեսահսկումներ (ֆոտո և վիդեո) ոչ պրոֆեսիոնալ սարքերով (եթե դրանց օգտագործումը արգելված չէ հանդիպման կազմակերպչի կողմից և/կամ Մրցաշարերի կանոնակարգով, ինչի մասին մուտքի տոմսերի վրա պետք է լինի համապատասխան գրառում):

1.6. Տրիբունաներ բարձրանալ Մարզադաշտում գնված ոչ ակոնոլային խմիչքներով (միայն պլաստմասե կամ թղթյա բաժակներով) և սնունդով:

1.7. Ապահովել հանդիպման կազմակերպչի, ոստիկանության և այլ անձանց կողմից իրենց անձի նկատմամբ ցուցաբերվող հարգանքը և պաշտպանության ապահովումը, այդ թվում՝ նաև անմարդկային կամ անձը ոտնահարող վերաբերմունքը կանխարգելող միջոցների կիրառումը:

1.8. Ստանալ իրենց կյանքի անվտանգության և առողջության ապահովում, ինչպես նաև իրենց գույքի նկատմամբ վնասի պատճառման կանխարգելում:

1.9. Ժամանակին ստանալ Մարզադաշտում հանդիսատեսների գտնվելու և Մարզադաշտից դուրս գալու կարգի, հանդիպմանը ներկա գտնվելու հետ կապված սահմանափակումների և արգելքների մասին անհրաժեշտ և հավաստի տեղեկատվություն:

1.10. Ստանալ անհրաժեշտ բժշկական օգնություն Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված դեպքերում և կարգով:

1.11. Օգտվել այլ իրավունքներից, որոնք նախատեսված են ՀՀ օրենսդրությամբ, ՀՀ համապատասխան սուբյեկտի նորմատիվ իրավական ակտերով, ինչպես նաև սույն Կանոններով:

2. Սեկցիաների կազմակերպումն ու հսկողության համակարգերը

2.1. Մրցումների կանոնակարգերով կամ ՀՖՖ համապատասխան նորմերով ընդհանուր և հատուկ (Մարզադաշտերի առանձին կատեգորիաների համար և այլ հատուկ դեպքերում) պահանջներ կարող են դրվել Մարզադաշտերը սարքավորումներով ապահովելու համար, այդ թվում նաև՝ տեսահսկման ու տոմսերի վաճառքի և/կամ վերահսկողության համակարգերով, որը հնարավորություն կտա Մարզադաշտում ապահովել կարգ ու կանոն և հասարակական անվտանգություն:

Տեսահսկման համակարգերը հանդիսանում են հանդիպման ժամանակ անվտանգության ապահովման գլխավոր պայմաններից մեկը, ինչպես նաև սույն կանոնների խախտման մեջ մեղադրվող անձանց, այդ թվում՝ հանդիսատեսների և ոստիկանության պատիժն իրականացնելու միջոց:

Ըստ այդմ, Մարզադաշտերը տեսահսկման համակարգերով ապահովելու նպատակով սույն կետում նշված ընդհանուր և հատուկ պահանջների կազմակերպման և հաստատման հարցում պետք է որոշվի հետևյալը՝

Տեսախցիկների նվազագույն քանակը և Մարզադաշտում դրանց տեղադիրքը, տեղադրված յուրաքանչյուր տեսախցիկի նվազագույն և առաջարկվող թույլատրելի կադրը, Մարզադաշտի գոտիների նվազագույն տեսաձածկույթը մշտական տեսագրություններով (ներառյալ Մարզադաշտի բոլոր սեկցիաները, Մարզադաշտի յուրաքանչյուր մուտքը, սեկցիա մուտք գործելու յուրաքանչյուր մուտքը), պատկերի մոտեցման հնարավորությունները, տեսագրության գունավորությունը և այլ բնութագրեր, որոնք ազդում

են նշված սարքավորումների օգտագործման արդյունավետության վրա սույն Կանոնների շրջանակներում: Հանդիպման կազմակերպիչը և/կամ սեփականատերը (վարձակալողը) պարտավոր են պահել տեսագրությունները հանդիպման օրվանից սկսած շուրջ 90 օր, որից հետո դրանք ենթակա են ոչնչացման քրեական-ընթացակարգային կամ վարչական-ընթացակարգային նպատակներին ծառայելու անհրաժեշտության բացակայության դեպքում:

2.2. Յուրաքանչյուր հանդիպման ժամանակ, եթե այլ բան նախատեսված չէ ՀՖՖ-ի կողմից, «ընտանեկան դիտման» համար հատկացվում է առնվազն 2 սեկցիա: Մարզադաշտից հեռացման սպառնալիքով Մարզադաշտի ամբողջ տարածքում ընդհանրապես, իսկ այդ սեկցիաներում մասնավորապես, արգելվում է դյուրավառ նյութերի, մեգաֆոնների, թմբուկների օգտագործումը, ինչպես նաև ծխելը հանդիպումից առաջ, հետո և հանդիպման ընթացքում:

2.3. Հանդիսատեսների առանձին խմբերի (հաշմանդամների, վետերանների) անվտանգությունն ապահովելու նպատակով հանդիպման կազմակերպիչը կարող է այդ խմբերի համար կիրառել Մարզադաշտ այցելելու հատուկ պայմաններ՝ մինչև տոմսերի իրացումը իր որոշման մասին նախօրոք տեղյակ պահելով Մարզադաշտի սեփականատիրոջը և/կամ վարձակալողին, Ոստիկանությանը, ինչպես նաև Հանդիսատեսին:

2.4. Մինչև 14տ. հանդիսատեսների անվտանգությունն ապահովելու նպատակով հանդիպման կազմակերպիչը պետք է այդ խմբերի համար կիրառի Մարզադաշտ այցելելու հատուկ պայմաններ, այդ թվում՝ թույլատրելով նրանց՝ Մարզադաշտ այցելելը, միմիայն չափահաս հանդիսատեսի ուղեկցությամբ՝ մինչև տոմսերի իրացումը այդ պայմանների մասին նախօրոք տեղյակ պահելով Հանդիսատեսին:

2.5. Հանդիպման տոմսի վրա պետք է նշված լինի, որ հանդիպման կազմակերպիչը կամ նրա կողմից լիազորված անձինք իրավասու են իրականացնել Հանդիսատեսի տեսագրում՝ հետագայում այդ նյութերը գովազդի նպատակով օգտագործելու համար, ինչպես նաև իրավախախտում կատարած անձանց անօրինական գործողությունների կանխման/ հայտնաբերման/ հաստատման համար:

3. Աջակցության ձևերը

3.1. Հանդիպումից առաջ, հետո և հանդիպման ընթացքում Մարզադաշտում գտնվող Հանդիսատեսն իրականացնում է աջակցությունը հետևյալ կարգով՝

3.1.1. Մասնակից Ակումբի կողմից պետք է նշանակվի Միջոցառման մասնակիցների աջակցության՝ 3.2 կետի օրենքներին չհամապատասխանող յուրաքանչյուր միջոցի (բաններներ, պաստառներ, մեծ չափերի դրոշներ, թմբուկներ, մեգաֆոններ և այլն) օգտագործման համար պատասխանատու, երկրպագուների միության ներկայացուցիչ հանդիսացող և իր անձը հաստատած որևէ մեկը:

Աջակցության նշված ձևի օգտագործման և իրավախախտման հետ անմիջական կապ ունեցող անձի չհաստատման պարագայում, սույն Կանոնների խախտման արձանագրման դեպքում պատասխանատվություն է կրում երկրպագուների ներկայացուցիչներից, սույն Կանոններին համապատասխան, պատասխանատու նշանակված անձը: Նման իրադրությունում, համաձայն ՀՖՖ կանոնակարգող փաստաթղթերի, պատասխանատվություն է կրում Ակումբը (ազգային հավաքականների հանդիպումների դեպքում՝ ՀՖՖ-ն):

3.1.2. Մասնակիցների աջակցության ձևերի քանակը, բովանդակությունը և տեղադրման վայրերը որոշվում են Հանդիպման կազմակերպչի վերահսկիչ-հրահանգող մարմինների կողմից համաձայնեցնելով Մարզադաշտի սեփականատիրոջ (վարձակալողի), Հանդիպմանը ներկա իրավապահ մարմինների շտաբի ղեկավարի և ԱԻՆ ներկայացուցիչների հետ:

3.2. Աջակցության այն ձևերը, որոնց համար որևէ համաձայնություն չի պահանջվում, պետք է բավարարեն սույն Կանոններին կից գործող Հավելված 1-ի և հետևյալ պահանջներին՝

3.2.1. Բաններները և դրոշները պետք է լինեն 2 մ x 1.5 մ կամ ավելի փոքր, պատրաստված լինեն հրակայուն, անվտանգ նյութերից, այդ թվում՝ պլաստմասե ճկուն, սնամեջ լիսեռների վրա, որոնց չափերը չեն գերազանցում 1.5 մ երկարությունը և 5 սմ տրամագիծը՝ պատրաստված հրակայուն նյութերից:

3.2.2 Պետք է չպարունակեն քաղաքական, ծայրահեղ, սադրիչ կամ գովազդային բնույթի գրություններ:

3.2.3. Պետք է տեղադրվեն Մարզադաշտի տրիբունաների՝ Հանդիսատեսով չգրադեցված սեկցիաներում կամ այլ վայրերում, որոնք էապես չեն խանգարի այլ Հանդիսատեսի կողմից հանդիպման դիտմանը:

3.2.4. Ոչ հայերեն լեզվով բառեր և արտահայտություններ պարունակող աջակցության միջոցները պետք է ունենան ՀՖՏ-ի կամ Ակումբի կողմից վավերացված թարգմանություն:

3.2.5. Հապավումներ և թվերի համակցություններ պարունակող աջակցության միջոցները պետք է ունենան դրանց վերաբերյալ ՀՖՏ-ի կամ Ակումբի կողմից վավերացրած գրավոր բացատրություն:

3.2.6. Վերոնշյալ ատրիբուտների սեփականատերերը հանդիպումից ոչ պակաս, քան 3 ժամ առաջ պետք է Հանդիպման կազմակերպչի, Մարզադաշտի սեփականատիրոջ (վարձակալողի) և իրավապահ մարմինների շտաբի ներկայացուցիչներին, ԱԻՆ-ին ներկայացնեն այդ ատրիբուտները՝ պարզելու համար դրանց համապատասխանելիությունը ներկայացված պահանջներին:

3.2.7. Հանդիսատեսի/երկրպագուների կողմից սույն Կանոնների խախտման դեպքում կարգադրիչները, Հանդիպման կազմակերպչի վերահսկիչ-հրահանգող մարմինները կամ Ոստիկանությունը կարող են որոշում կայացնել աջակցության վերոնշյալ միջոցների օգտագործումն արգելելու վերաբերյալ:

3.3. Հանդիպման սկզբից ոչ ուշ, քան 5 աշխատանքային օր առաջ երկրպագուների միությունը իրավասու է Հանդիպման կազմակերպչին ներկայացնել գրավոր դիմում Հանդիպման ժամանակ Մարզադաշտում սույն Կանոնների 3.2. կետին չհամապատասխանող աջակցության միջոցների տեղակայման մասին (բաններներ, մեծ դրոշներ, թմբուկներ և այլն):

3.4. Երկրպագուների խմբերը առանձին հանդիպումների ժամանակ իրավունք ունեն օգտագործել աջակցության ձևեր, ինչպես նաև մասնակից թիմին ձայնային հզոր աջակցություն ցուցաբերելու համար նախատեսված, 200 Վտ ոչ ավել հզորությամբ օժտված համակարգեր (յուրաքանչյուր սեկցիայում՝ մեկ միավոր համակարգից ոչ ավել), որոնց համար հայտերը պետք է ներկայացվեն հանդիպման Կազմակերպչին ոչ ուշ, քան Հանդիպման սկզբից մեկ օր առաջ: Դիմումը պետք է համաձայնեցվի Հանդիպման կազմակերպչի կամ նրա վերահսկիչ-հրահանգող մարմինների հետ:

3.5. Մարզադաշտում Հանդիպումից առաջ, հետո և հանդիպման ընթացքում Հանդիսատեսի կամ այլ անձանց կողմից հատուկ ակցիաների անցկացումը պատժվում է ՀՖՏ հովանու

ներքո անցկացվող մրցաշարերի անցկացումն իրականացնող կազմակերպությունների կողմից՝ մարզադաշտի սեփականատիրոջ և/կամ վարձակալողի, ՀՀ Ոստիկանության և ԱԻՆ մարմինների հետ գրավոր համաձայնությամբ: Հատուկ ակցիաներ են համարվում գովազդային տարատեսակ ակցիաները, գեղարվեստական ներկայացումները, լրության թույլները և այլն:

3.6. ՀՖՖ-ն, Ոստիկանության մարմինների հետ համատեղ, պարբերաբար թարմացնում են Մարզադաշտի տարածքում արգելվող առարկաների ցանկը:

4. Հանդիսատեսները պարտավոր են՝

4.1. Մարզադաշտ ներկայանալ հանդիպումից երկու ժամ առաջ՝ հաշվի առնելով մարզադաշտ մուտք գործելու համար նախատեսված ժամանակը: Այդ ամենը պետք է նշված լինի տոմսի վրա:

4.2. Գտնվելով Մարզադաշտում և նրա հարակից տարածքներում պահպանել հասարակական կարգը և վարքագծի համընդհանուր նորմերը:

4.3. Դրսևորել հարգալից վերաբերմունք հանդիպման մասնակիցների, հանդիսատեսների, սպասարկող անձնակազմի, կարգ ու կանոնն ապահովող անձանց նկատմամբ, չկատարել շրջապատի մարդկանց վտանգի տակ դնող գործողություններ:

4.4. Խնամքով վերաբերվել Մարզադաշտի և այլ Հանդիսականների սեփականությանը, պահպանել մաքրություն:

4.5 Վերահսկիչ-կարգադրող մարմինների ներկայացուցիչներին, իսկ անհրաժեշտության դեպքում նաև Ոստիկանության աշխատակիցներին ներկայացնել տոմսերը, հրավերքները կամ փաստաթղթերը (հավատարմագրերը), որոնք հնարավորություն են տալիս ներկա գտնվել Հանդիպմանը և զբաղեցնել ձեռք բերված տոմսերի կամ դրանց փոխարինող փաստաթղթերի մեջ նշված նստատեղերը:

4.6. Միջոցառմանը տրանսպորտային որևէ միջոցով ներկայանալու դեպքում ներկայացնել վերահսկող-հրահանգիչ մարմիններին ավտոտրանսպորտային անցաթղթեր և փաստաթղթեր, որոնք հնարավորություն են տալիս մեքենայի մեջ գտնվող բոլոր անձանց ներկա լինել Հանդիպմանը: Թույլատրել վերահսկիչ-կարգադրող մարմիններին և Ոստիկանության աշխատակիցներին իրականացնել մեքենայի ստուգում և կայանել տրանսպորտային միջոցը անցաթղթի մեջ նշված ավտոկանգառում:

4.7. Վերահսկիչ-կարգադրող մարմիններին և Ոստիկանության աշխատակիցներին անհապաղ տեղյակ պահել կասկածելի առարկաների հայտնաբերման, հրդեհի կամ ծխի առաջացման, մարզադաշտում գտնվող անձանց (Ձեզ կամ մեկ ուրիշին) բժշկական օգնություն ցուցաբերելու անհրաժեշտության դեպքում:

4.8. Անվտանգության ապահովման և Մարզադաշտ արգելված առարկաներ մտցնելու կամ Մարզադաշտից դուրս բերելու դեպքերը բացառելու համար անցնել հատուկ ստուգում (այն ներառում է մարմնի և տվյալ անձի մոտ առկա պայուսակի ամբողջական զննումը):

4.9. Մարզադաշտի պահպանման խցիկներ հանձնել ծանր կամ Մարզադաշտի տարածք մտցնելու համար արգելված առարկաները: Այս կանոնը պահպանելու համար ծանր առարկա է համարվում 25 սմ x 25 սմ x 25 սմ չափսերը գերազանցող ցանկացած առարկա, բացառությամբ սույն կանոններում նշված թմբուկների:

4.10. Կատարել վերահսկիչ-կարգադրող մարմինների և Ոստիկանության աշխատակիցների օրինական հրահանգները:

4.11. Արտահանման մասին տեղեկություն ստանալու դեպքում գործել առանց խառնաշփոթ առաջացնելու, արտահանման պլանին համապատասխան կամ համաձայն մարզական

համայնքում կարգուկանոնի պահպանման և հրդեհային անվտանգության համար պատասխանատու անձանց՝ հանդիպման կազմակերպիչների, վերահսկիչ-կարգադրող մարմինների, Մարզադաշտի սեփականատիրոջ և (կամ) վարձակալողի, Հայաստանի Հանրապետության Ոստիկանության կամ ԱԻՆ աշխատակիցների ցուցումների:

5. Հանդիսատեսներին արգելվում է

5.1. ՀՀ օրենսդրական նորմերին հետևելու, այլ հանդիսատեսների և միջոցառման մասնակիցների, սպասարկող անձնակազմի, կարգ ու կանոնի պահպանման պատասխանատուների իրավունքներն ու օրինական շահերը պահպանելու նպատակով, Մարզադաշտում գտնվող հանդիսատեսին արգելվում է՝

5.1.2. Ալկոհոլի կամ թմրանյութերի ազդեցության տակ Մարզադաշտ մուտք գործելը և մարզադաշտում գտնվելը:

5.1.3. Մարզադաշտում տեղի ունեցող մարզական միջոցառման կազմակերպիչների, Մարզադաշտի սեփականատիրոջ և/կամ վարձակալողի կողմից արգելված վայրերում ծխելը:

5.1.4. Իրերի, այդ թվում՝ բանջարեղենի, մրգերի կամ ցանկացած տեսակի տարայով կամ առանց տարայի հեղուկի նետումը Հանդիպման մասնակիցների, հանդիսատեսի, այլ անձանց, ինչպես նաև խաղադաշտի ուղղությամբ կամ հենց խաղադաշտի վրա:

5.1.5. Իրենց կամ այլ անձանց հանդեպ առողջության, կյանքի կամ անվտանգության սպառնալիք ստեղծող գործողությունների իրականացում, ինչպես նաև սույն Կանոններով, Մրցումների կանոնակարգով կամ հանդիպման Կազմակերպչի որոշմամբ հաստատված, Հանդիպման անցկացման կարգը խախտող գործողությունների իրականացում:

5.1.6. Մարզադաշտ մուտք գործելիս կամ Մարզադաշտում գտնվելիս դեմքը փակելու նպատակով հագուստի տարրերի, այլ իրերի կամ մեթոդների օգտագործումը:

5.1.7. Հանդիսատեսների օգտագործման համար չնախատեսված շինություններում ու կառույցներում գտնվելը (ֆասադներ, ցանկապատեր, պատեր, արգելապատնեշներ, լուսավորության սյուներ, հեռուստատեսային տեսախցիկների պլատֆորմներ, ծառեր, տանիքներ և այլն):

5.1.8. Խաղադաշտ կամ դրան հարակից տարածք, այլ՝ այցելության համար արգելված կամ հանդիսատեսի տոմսի վրա չնշված գոտիներ մուտք գործելը (Մարզադաշտի տեխնիկական գոտի, VIP, ՁԼՄ գոտիներ և այլն):

5.1.9. Մարզադաշտից արտահանման համար նախատեսված գոտիներում, այդ թվում ինչպես հիմնական, այնպես էլ պահեստային միջանցքներում, ելքերում և մուտքերում խոչընդոտների ստեղծումը:

5.1.10. Չայնարկումները, վանկարկումները, երգերի կատարումը, նշանների և/կամ այլ խորհրդանիշների հասարակական ցուցադրումը, տպագիր նյութերի տարածումը, ինչպես նաև այլ գործողություններ, որոնք վիրավորում են միջոցառման մասնակիցների և Հանդիսատեսի արժանապատվությունը, վարկաբեկում են նրանց, կրում են ծայրահեղական բնույթ կամ ուղղված են ռասսայական, սոցիալական, ազգային խտրականություն առաջացնելուն, ինչպես նաև վետերանների և հանգուցյալների դեմ:

5.1.11. Առանց հանդիպման Կազմակերպչի, Մարզադաշտի սեփականատերերի (վարձակալողների) գրավոր թույլտվության Մարզադաշտի տարածքում տեղակայված շինությունների և կառույցների վրա գրելն ու նկարելը, ինչպես նաև դրանց կողքին օտարածին իրեր տեղադրելը:

5.1.12. Առանց հանդիպման Կազմակերպչի գրավոր թույլտվության առևտուր իրականացնելը, հայտարարությունների, պաստառների և տեղեկատվական բովանդակություն ունեցող այլ իրերի փակցնելը:

5.1.13. Հանդիպման ներկայանալ կենդանիների և թռչունների հետ:

5.1.14. Իրականացնել ցանկացած քաղաքական ակցիաներ, մասնավորապես այնպիսի ակցիաներ, որոնք ուղղված են քաղաքական հայացքների հասարակական արտահայտմանը, պետական կամ տեղական իշխանության մարմինների կողմից կայացրած քաղաքական որոշումների հանդեպ հավանության/անհամաձայնության, աջակցության/բողոքի հայտնելուն:

5.1.15. Տրիբունաների աստիճանավանդակների և անցուղիների վրա կանգնելը, հանդիպմանը կանգնած հետևելը և դրա արդյունքում աստիճանավանդակների և անցուղիների արգելափակումը:

5.2. Հանդիսատեսին արգելվում է Մարզադաշտի տարածք մտնել և օգտագործել՝

5.2.1. Ցանկացած տեսակի, այդ թվում նաև ինքնապաշտպանության համար նախատեսված զենք, զինամթերք, կտրող և ծակող առարկաներ, արցունքաբեր և նյարդային ազդեցության գազային բալոններ, որպես զենք օգտագործվելու ենթակա կամ այլ հանդիսատեսների առողջությանը հավանական վնաս պատճառող այլ առարկաներ, այդ թվում՝ հովանոցներ, ծանր առարկաներ և այլն բացառությամբ թմբուկների, մեկ տրիբունայի համար նախատեսված ոչ ավել քան 3 միավորով և համաձայն սույն Կանոնների պահանջների:

5.2.2. Դյուրավառ նյութեր անկախ դրանց տեսակից և նշանակետից, ներառյալ այն նյութերը, որոնք կարող են օգտագործվել դյուրավառ նյութերի կամ ծխերի պատրաստման համար (բացառությամբ ծխախոտի, գրպանի պլաստմասե կրակայրիչի), այդ թվում՝ ծխարձակիչներ, ճայտրուկներ, ազդանշանային հրթիռներ, պայթուցիկ, թունավոր և հոտավետ նյութեր, ռադիոակտիվ նյութեր, գազի բալոններ, վառելանյութեր (բացառությամբ՝ լուցկիների, կրակայրիչների և ծխախոտի):

5.2.3. Շշեր, բաժակներ, սափորներ կամ բանկաներ, այդ թվում նաև անագներ, ինչպես նաև պոլիէթերից, ապակուց կամ ցանկացած այլ փխրուն, կոտրվող կամ, հակառակը, չափազանց պինդ նյութերից պատրաստված առարկաներ, այդ թվում նաև՝ տետրապակ փաթեթներ:

5.2.4. Ձայն արտաբերող փողային հարմարանքներ (վուվուզելաներ):

5.2.5. Ցանկացած տեսակի ակոհոլային խմիչքներ, թմրանյութեր կամ թունավոր նյութեր կամ ստիմուլյատորներ:

5.2.6. Ծայրահեղ բնույթ կրող քարոզչական նյութեր:

5.2.7. Նացիստական կամ որևէ այլ խտրականություն պարունակող ատրիբուտիկա, խորհրդանշաններ կամ նացիստական կամ այլ խտրականություն պարունակող ատրիբուտիկային ու խորհրդանշաններին շփոթելու աստիճան նման նշաններ:

5.2.8. Տեխնիկական միջոցներ, որոնք կարող են խանգարել հանդիպման անցկացմանը կամ նրա մասնակիցներին (լազերային սարքեր, լապտերներ և այլն), ձայնային ուժեղացման միջոցներ (բացառությամբ սույն Կանոններով հաստատված միջոցների), ռադիոկայաններ:

6. Մարզադաշտի անվտանգության ապահովման ծառայության և Ոստիկանության փոխհարաբերությունները

6.1. Կարգուկանոնը և անվտանգությունը պետք է ապահովված լինեն՝ Հանդիպման օրը Մարզադաշտի տարածք հանդիսատեսի մուտք գործելու պահից սկսած (կամ, կապված, թե ինչը տեղի կունենա ավելի շուտ, հանդիպման մասնակից Թիմի՝ մարզադաշտի տարածք

մուտք գործելու պահից): Մարզադաշտում մարզական միջոցառումների անցկացման ժամանակ կարգուկանոնը և անվտանգությունն ապահովում են Կարգադրիչները, հանդիպման Կազմակերպչի Վերահսկիչ-կարգադրող մարմինները և Ոստիկանությունը:

6.2. Մարզադաշտի Վերահսկիչ-կարգադրող մարմինների մեջ պետք է մտնեն ֆուտբոլային հանդիպումների անցկացման փորձ ունեցող, 18 տարին լրացած անձինք, կանայք և տղամարդիկ:

6.3. Ընդհանուր կարգի համաձայն՝ անմիջականորեն Մարզադաշտի տարածքում անվտանգության համար պատասխանատու է խաղի Կազմակերպիչը: Մարզադաշտի հարակից տարածքում կարգուկանոնի պահպանման համար պատասխանատու է Ոստիկանությունը:

6.4. Մարզադաշտում կարգուկանոնին հետևում են Կարգադրիչները, ուլքեր, որպես կանոն, պետք է ներգրավված լինեն անվտանգության ծառայության համակարգում և պարբերաբար անցնեն ՀՖՖ կողմից ղեկավարվող ծրագրային ուսուցում: Մարզադաշտի կարգուկանոնն ապահովող մասնավոր ընկերությունների խաղին ներգրավված ներկայացուցիչներն ունեն Կարգադրիչների իրավունքներ և պարտականություններ:

6.5 Կարգադրիչները պատասխանատու են դեպի Մարզադաշտ մարդկանց հոսքի մուտք գործելու, նրանց ճիշտ և ժամանակին տեղավորելու համար, իսկ խաղի ընթացքում, Հանդիսատեսի կողմից նշված Կանոնները պահպանելու համար, հետևում են տրիբունային՝ մեջքով կանգնած դեպի խաղադաշտը, կազմակերպում են Հանդիսատեսի ելքը Մարզադաշտից:

6.6. Կարգադրիչները պետք է զինված լինեն միմյանց և Կարգադրիչների ղեկավարի հետ կապի միջոցներով, իսկ արտակարգ իրավիճակներում՝ նաև Ոստիկանության հետ կապի միջոցներով:

6.7. Մարզադաշտի յուրաքանչյուր Սեկցիայի համար պետք է հատկացվի 6 կարգադրիչից ոչ պակաս: Երկուսը պետք է գտնվեն ներքևում և վերահսկեն Կարգադրիչների ղեկավարի կողմից նշանակված սեկցիան, 4 կարգադրիչներ պետք է գտնվեն անցումների մոտ, սկսած 10-րդ շարքից և բարձր՝ հանդիսատեսների նկատմամբ վերահսկողությունն ապահովելու համար: Բոլոր դեպքերում, կարգադրիչների քանակը պետք է որոշվի՝ հաշվի առնելով մարզադաշտի հնարավորությունները (մուտքերի և ելքերի քանակը, պահեստային ելքերը և այլն), սպասվող և իրական հանդիսատեսների քանակը և Հանդիպման պոտենցիալ վտանգավորության աստիճանը. հիմնականում անհրաժեշտ է ունենալ մեկ կարգադրիչ 70 հանդիսատեսի համար: Կարգադրիչների քանակը չի կարող լինել սույն հոդվածում սահմանված քանակից քիչ:

6.8. Հանդիսատեսի կողմից սույն կանոններին հակասող գործողությունների իրականացման դեպքում Կարգադրիչը պետք է ձեռնարկի ՀՀ գործող օրենսդրությանը և սույն Կանոններին չհակասող բոլոր միջոցները՝ այդ գործողությունները կանխելու համար:

6.9. Քաղաքացիների կյանքին կամ առողջության համար վտանգավոր իրավիճակների առաջացման, ինչպես նաև այլ իրավիճակների դեպքում, որոնց մասին Կարգադրիչը նախապես ցուցումներ է ստացել, Կարգադրիչը պարտավոր է կապի միջոցով Կարգադրիչների ղեկավարին անհապաղ տեղեկացնել ստեղծված իրավիճակի մասին:

6.10. Այն դեպքում, երբ Կարգադրիչը չի կարողանում ինքնուրույն կանխել Հանդիսատեսի անօրինական գործողությունները, Կարգադրիչների ղեկավարը պետք է կապի միջոցով տեղյակ պահի Ոստիկանության մարմիններին ստեղծված իրավիճակի մասին: Այդ դեպքում Ոստիկանության մարմինները գործում են ինքնուրույն՝ առաջնորդվելով ՀՀ Ոստիկանության կողմից հաստատված ցուցումներով՝ համաձայն ՀՀ «Ոստիկանության» մասին օրենքի:

Միաժամանակ Կարգադրիչները պետք է Ոստիկանության մարմիններին ցուցաբերեն օգնություն՝ իրենց իրավասությունների շրջանակներում:

6.11. Հանդիպման Կազմակերպիչ թիմի երկրպագուների ներկայացուցիչներ համարվող կարգադրիչները չպետք է սպասարկեն հյուր թիմի երկրպագուների համար նախատեսված սեկցիան (սեկցիաները), որոնք պետք է սպասարկվեն կամ հատուկ պատրաստված, հյուրերի հանդեպ չեզոք դիրք ունեցող Կարգադրիչները կամ Անվտանգություն ապահովող մասնավոր ընկերությունների աշխատակիցները:

6.12. Հանդիպման Կազմակերպիչը պարտավոր է Ոստիկանության մարմիններին հատկացնել հատուկ տարածքներ՝ կարգադրիչների հետ աշխատանքները համակարգելու համար:

6.13. Կարգադրիչները պետք է հագնված լինեն միանման, որպեսզի նրանց հնարավոր լինի հեշտ տարբերել, ինչպես նաև ունենան հավատարմագիր, որի վրա պետք է գրված լինի «Կարգադրիչ»: Կարգադրիչների ղեկավարները պետք է իրենց համազգեստով հեշտությամբ տարբերվեն մյուս Կարգադրիչներից:

6.14. Հանդիպման կազմակերպիչը պետք է ամեն տարի՝ մրցումների սկսվելուց առաջ, անցկացնի Կարգադրիչների և Կամավորների ուսուցանում Ոստիկանության փորձառու աշխատակցի կողմից:

6.15. Եթե հանդիպման Կազմակերպիչը որոշում կայացնի Կարգադրիչների պարտականությունները կատարելու համար երրորդ անձանց ներգրավելու մասին, պետք է կնքվի համապատասխան պայմանագիր, որը պետք է ներկայացվի մրցումն անցկացնող կազմակերպություն և պարունակի հետևյալ պայմանները.

- Կարգադրիչի պարտականությունների ցանկ;
- Պարտականությունների սահմանները;
- Պաշտոնների ցանկ;
- Պարտականությունների կատարման ժամկետ;
- Հանդիսատեսի նկատմամբ Կարգադրիչների իրավունքներ և պարտականություններ;
- Ներգրավված անձանց քանակ և աշխատանքի տեսակ, ինչպես նաև իրենց մասնագիտական գիտելիքների ցանկ և անձնական տվյալներ;
- Կարգադրիչների թիմի կազմակերպում և կազմակերպչական կառուցվածք;
- Կարգադրիչների նույնականացումը (համազգեստ);

6.16. Կարգադրիչների լրացուցիչ պարտականությունները.

- Իրականացնել տոմսերի, հրավերների և հավատարմագրերի վիզուալ ստուգում մարզադաշտի առաջնային մուտքերի մոտ;
- Իրականացնել մարզադաշտ մուտք գործող բոլոր երկրպագուների մարմնի ամբողջական ստուգում, այդ թվում երկրպագուների մոտ առկա պայուսակների և այլ կրիչների ստուգում (կին երկրպագուների պարագայում ստուգումն իրականացնել կին Կարգադրիչների կողմից);
- Օժանդակել և անհրաժեշտության դեպքում հրահանգել երկրպագուներին մարզադաշտերի հիմնական անցակետերի (տուրնիկետների) մոտ տոմսերի ստուգումն ու երկրպագուների մուտքը մարզադաշտ պատշաճ կազմակերպելու նպատակով;
- Իրականացնել Մարզադաշտի անցումների անվտանգության վերահսկողությունը՝ արտաքին և ներքին տրամազծերով, ինչպես նաև հատուկ գոտիներում;
- Հսկել Մարզադաշտի կարևորագույն վայրերը, օրինակ, տուրնիկետները, տոսմերի վաճառակետերը, թիմերի և մրցավարների հանդերձարանները, դոպինգ-ստուգման վայրերը, VIP անձանց համար նախատեսված սրահները և գոտիները, ինչպես նաև

նրանց ավտոտրանսպորտային միջոցները: Հսկել ՁԼՄ-ների ներկայացուցիչներին և նրանց նյութերը;

- Արգելել Մարզադաշտ մուտք գործել դրա իրավունքը չունեցող ցանկացած անձի, ով վտանգ է ներկայացնում ակոհոլային կամ այլ արգելված միջոցների օգտագործման պատճառով;
- Ոստիկանության մարմինների հետ համատեղ վերահսկել և ստուգել Մարզադաշտ մուտք գործող և գործած անձանց: Իրականացնել նրանց մոտ գտնվող առարկաների ստուգում;
- Հեռացնել այն անձանց, որոնք հրաժարվում են ենթարկվել ստուգման, կամ խոչընդոտում են տեսահսկման իրականացմանը;
- Ժամանակավոր վերացնել, հեռացնել և սահմանված կարգով, եթե հնարավոր է, վերադարձնել այն առարկաները, որոնց մուտքը մարզադաշտ արգելված է՝ համաձայն Մարզադաշտի սեփականատիրոջ (վարձակալողի) պահանջների;
- Կամավորների հետ միասին ապահովել հանդիսատեսի հոսքը տոմսերի վրա նշված սեկցիաներ;
- Հետևել, որպեսզի բոլոր մուտքերը և ելքերը՝ հիմնական և պահեստային, խցանված չլինեն;
- Հսկել մուտքերն ու ելքերը, ինչպես նաև դեպի տրիբունաներ պահեստային անցումները՝ սկսած մարզադաշտի բացումից մինչև փակվելու պահը;
- Թույլ չտալ Հանդիսատեսին հայտնվել այնպիսի գոտիներում, որտեղ արգելված է մուտք գործել (մասնավորապես, խաղադաշտ);
- Պաշտպանել Հանդիսատեսի մասնակից ֆուտբոլիստներին և պաշտոնական անձանց խաղադաշտ մտնելիս և դուրս գալիս;
- Ոստիկանությանը տեղյակ պահել Հանդիսատեսի կողմից ցանկացած անօրինական գործողության իրականացման դեպքում;
- Տեղեկացնել Ոստիկանությանը, շտապ օգնության ծառայությանը և իրավասու այլ մարմիններին վտանգավոր իրավիճակների դեպքում, եթե նրանք չեն կարողանում ինքնուրույն չեզոքացնել վտանգը:
- Կարգադրիչները պետք է տեղեկացնեն Ոստիկանությանը ցանկացած անօրինական գործողության մասին (ռասիստական արտահայտություններ և այլն)՝ խախտումը կանխելու և Մարզադաշտի տարածքում կարգուկանոնն էականորեն խախտող անձանց հեռացնելու նպատակով:

6.17. Յուրաքանչյուր Կարգադրիչ պատասխանատու է իր Ղեկավարի կողմից նշանակված տրիբունայի և սեկցիայի համար:

6.18. Ռիսկի մեծ աստիճան պարունակող հանդիպումների ժամանակ պետք է ձեռնարկվեն հետևյալ միջոցները.

6.18.1. Հանդիսատեսի խիստ բաժանում՝ հատկացնելով նստատեղեր այնպիսի սեկցիաներում, որոնք չեն համապատասխանում տոմսերում նշված նստատեղերի համարներին;

6.18.2. Պոտենցիալ «վտանգավոր» երկրպագուների կողմից զբաղեցված սեկցիաների միջև ընկած հատվածներում դատարկ սեկցիաների հատկացում;

6.18.3. Կարգադրիչների քանակի ավելացում, մասնավորապես խաղադաշտի շուրջ գտնվող տրիբունաների մուտքերի և ելքերի, ինչպես նաև մրցակից թիմերի երկրպագուների համապատասխան սեկցիաների մոտ;

6.18.4. Բոլոր սեկցիաներում աստիճանների վրա պետք է գտնվեն միայն Կարգադրիչները և Կամավորները;

6.18.5. Մարզադաշտի նկատմամբ մշտական հսկողություն և մարզադաշտում Ոստիկանության մշտական ներկայություն;

6.18.6. Հյուրընկալվող թիմի անվտանգության ծառայության ուժերով հյուրընկալվող թիմի երկրպագուների տեղաշարժի վերահսկողության ապահովում՝ սկսած օդանավակայանից, ինչպես նաև նավահանգիստներում կամ ավտոբուսների և մետրոյի կանգառներից մինչև Մարզադաշտ և հակառակը;

6.18.7. Մարզադաշտի տարածք ներգրավել հյուրընկալվող թիմի հաղորդավարին;

6.18.8. Հանդիսատեսին հանդիպման ավարտից հետո պահել այնքան, մինչև որ Մարզադաշտի սահմաններից դուրս ապահովվի կարգուկանոն: Այս դեպքում պետք է պահպանել հետևյալ սկզբունքները.

ա) Հանդիպման ավարտից քիչ առաջ պետք է բարձրախոսով հայտարարվի հանդիպման ավարտից հետո հյուրընկալվող թիմերի ելքը մարզադաշտից հետաձգելու մասին;

բ) Հանդիպման կազմակերպիչը պետք է հնարավորություն ընձեռի հյուրընկալվող թիմի երկրպագուներին Մարզադաշտի տարածքում գտնվելու ընթացքում օգտվել զովացուցիչ ըմպելիքներից և զուգարաններից;

գ) Եթե հնարավոր է, պետք է զբաղեցնել հյուրընկալվող թիմի երկրպագուներին (երաժշտություն, տեսագրություններ), որպեսզի նրանց սպասելու ժամանակահատվածն ավելի հաճելի և հանգիստ լինի;

դ) Այն երկրպագուները, որոնք դեռ գտնվում են Մարզադաշտի տարածքում, պետք է պարբերաբար տեղեկություն ստանան այն մասին, թե որքան ժամանակ է մնացել մարզադաշտը լքելուն:

6.19. Կամավորները աջակցություն են ցուցաբերում Կարգադրիչներին, վերահսկիչ-կարգադրող մարմիններին և Ոստիկանությանը հանդիսատեսների հոսքը դեպի տրիբունաներ և սեկցիաներ ուղղորդելու գործընթացում, ինչպես նաև տոմսերը ստուգելու և Կարգադրիչների, վերահսկիչ-կարգադրող մարմինների և Ոստիկանության ցուցումով մարզադաշտում կարգուկանոնն ապահովող այլ գործողությունների իրականացման ընթացքում

6.20. Կամավորների հագուստը պետք է տարբերվի Կարգադրիչների հագուստից և ունենա տարբերակիչ նշաններ:

7. Պատասխանատվությունը

7.1. Սույն Կանոնները խախտող կամ դրանց կատարումն իրականացնելուց հրաժարվող անձինք կարող են հեռացվել մարզադաշտից՝ առանց մուտքի տոմսերի արժեքի փոխհատուցման, իսկ Հանդիսատեսի կողմից անօրինական գործողությունների դեպքում նրանք ենթարկվում են պատասխանատվության՝ համաձայն Հայաստանի Հանրապետության քրեական և/կամ քաղաքացիական օրենսգրքի:

7.2 Հանդիպման կազմակերպիչը, ՀՖՖ-ն, կամ համապատասխան պետական մարմինները սույն Կանոնները խախտող անձանց նկատմամբ կարող են կիրառել հետևյալ պատժամիջոցները.

- մարզադաշտից հեռացնել խախտողին՝ առանց մուտքի տոմսի կամ այլ ծախսերի արժեքը փոխհատուցելու;
- չեղարկել Հանդիպումներին այցելելու համար նախատեսված արձեմենտը;
- ենթարկել վարչական կամ քրեական պատասխանատվության;
- ենթարկել քաղաքացիական-իրավական պատասխանատվության Մարզադաշտին, ՀՖՖ-ին կամ Ակումբին նյութական վնաս հասցնելու դեպքում;

- ՀՀ գործող օրենսդրությանը չհակասող միջոցներով արգելել այցելությունը Մարգադաշտ մարզական միջոցառումների անցկացման օրերին, ինչպես նաև չվաճառել տոմսեր և արգելել մուտքը Մարգադաշտ:

7.3. Թույլատրվում է հանդիսատեսից առգրավել առարկաներ, միայն եթե դա սահմանված է ՀՀ օրենսդրության հատուկ կարգով:

7.4. Հանդիպման մեկնարկից առաջ Հանդիսատեսից առգրավված առարկաները պետք է վերադարձվեն իրենց տերերին առաջին իսկ պահանջի դեպքում՝ ոչ ուշ, քան հանդիպման ավարտից մեկ ժամ հետո, առգրավման ժամանակ Կարգադրիչի կամ Ոստիկանության աշխատակիցների կողմից տրամադրված փաստաթուղթը Կարգադրիչների ղեկավարին ներկայացնելուց հետո:

7.5. Հանդիպման կազմակերպիչը իրավունք ունի օրինախախտներից պահանջել նյութական վնասի փոխհատուցում՝ համաձայն ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգի:

7.6. Հանդիպման Հանդիսատեսի գործողությունների համար, ՀՀ օրենսդրության, ՀՖՖ, ՖԻՖԱ և ՈԻԵՖԱ կանոնակարգերի համաձայն, պատասխանատվության ենթարկված Ակումբը կամ ՀՖՖ-ն իրավունք ունեն կոնկրետ մեղավոր Հանդիսատեսից պահանջել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով նյութական վնասի փոխհատուցում, ինչի մասին գրված է մուտքի տոմսի վրա:

7.7. Ոստիկանության մարմինները, ՀՖՖ-ն, Ակումբները և Մարգադաշտերի սեփականատերերը (վարձակալողները) ժամանակին և ամբողջությամբ տեղյակ են պահում միմյանց Հանդիպումների անցկացման ժամանակ ցանկացած Մարգադաշտում սույն Կանոնները խախտած ֆիզիկական անձանց մասին: Նշված տեղեկությունը հիմք է հանդիսանում սույն Կանոնների 7.8 կետի հնարավոր կիրառման համար:






7.8. Ֆիզիկական անձի նույնականացման դեպքում (մուտքի տոմսերի վերահսկողության համակարգի, Մարգադաշտի տեսահսկման համակարգի և նույնականացման այլ միջոցների հիման վրա) Մարգադաշտ մուտք գործելու, հատուկ ստուգում անցնելու կամ նախկինում ցանկացած Մարգադաշտում սույն Կանոնը խախտած նմանատիպ անձի՝ Մարգադաշտի տարածք մուտք գործելու ժամանակ Մարգադաշտի սեփականատերը (վարձակալողը) և/կամ վերահսկիչ-կարգադրող մարմիններն իրավունք ունեն թույլ չտալ նմանատիպ անձին ներկա գտնվել Հանդիպմանը, հեռացնել նրան Մարգադաշտից՝ բացատրելով պատճառները, ֆիքսելով տվյալ անձի մուտքի տոմսի տվյալները դրա նումինալ արժեքի հետագա փոխհատուցման պայմանով:


8. Ծանոթացումը կանոնների հետ

8.1. Սույն Կանոնների հետ ծանոթացումը ենթադրում է Հանդիսատեսին դրանց մասին տեղեկացնելը: Դա իրականացվում է Մարգադաշտում արգելված իրերի և գործողությունների ցանկի մասին տոմսի վրա անհրաժեշտ կարճ տեղեկատվության հրապարակումով, Մարգադաշտի, տրիբունաների և սեկցիաների մուտքերի մոտ տեղեկատվական ցուցանակների տեղադրումով, որոնք պարունակում են սույն Կանոնները, ինչպես նաև ՀՖՖ կայքում Կանոնների ամբողջական տեքստի հրապարակումով:

8.2. Սույն Կանոններում պարունակվող տեղեկատվությունը պետք է Հանդիսատեսին տրամադրվի հայերեն լեզվով:

Հավելված №1
Տուտբոլային ատրիբուտիկայի ցանկ

Առ ար կ այ ի ն կ ար	Անվանում	Չափս	Պահանջ
	Մեգաֆոն	Ցանկացած	Հզորությունը ոչ ավել քան 200 վտ, քանակը ոչ ավել քան 1 միավոր մեկ սեկտորի համար (անցկացնում և օգտագործում են միայն կազմակերպված ֆան ակումբները)
	Թմբուկ	D մինչև 60 սմ H մինչև 40 սմ	անցկացնում և օգտագործում են միայն կազմակերպված ֆան ակումբները
	Դրոշ	Մինչև 1,5 մ երկարություն	Միայն պլաստիկ և դատարկ ամրակներով
	Բաններ-տրանսպարանտ	Մինչև 2 մ x 1,5 մ	Հակահրդեհային հավաստագրի առկայության պարագայում, բովանդակությունը չպետք է խախտի ՀՀ գործող քրեական և վարչական օրենսդրությունը,
	Բաններ-պաստառ	Ցանկացած (անցկացնում և օգտագործում են միայն կազմակերպված ֆան ակումբները)	

	<p>Դրոշ-պաստառ</p>	<p>Ցանկացած (անցկացնում և օգտագործում են միայն կազմակերպված ֆան ակումբները</p>	<p>ինչպես նաև չպետք է պարունակի ֆուտբոլային հանդիպման մասնակիցների, մրցավարների, այլ հանդիսականների և ոստիկանության նկատմամբ վիրավորանքներ, քաղաքական և ռասիստական բովանդակություն</p>
---	--------------------	--	--